ք. Երևան, Ս.Դավթի 87ա <<13 >> հունիսի 2022թ.

<<ԱԳՐՈԼՈԳ>> փակ բաժնետիրական

ընկերություն ՀՎՀՀ 05016314

հասցե՝ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ Սուրբ Սարգիսի 40 Ա

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Սույն Ծանուցագրով Դուք ծանուցվում եք, որ ըստ եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկների 10.06.2022 թվականի դրությամբ դրոշմանիշային վճարի գծով չկատարված պարտավորություններից 209.500 դրամ գումարը գանձելու նպատակով, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունները գանձելու վերաբերյալ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 64-րդ կետի համաձայն սույն Ծանուցագիրը համարվում է պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթ:

ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5.1-րդ կետի համաձայն՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն ուժի մեջ է մտնում պատշաճ ծանուցվելու հաջորդ օրվանից՝

- հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու եղանակով ծանուցման դեպքում՝ անձնական էջ մուտք գործելու հաջորդ օրվանից,
- հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու անհնարինության կամ տեղադրելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում անձնական էջ մուտք չգործելու պարագայում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով ծանուցման դեպքում՝ կայքում տեղադրելու օրվա հաջորդ օրվանից:

Ուստի, ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք պարտադիր ծանուցման ենթակա սույն փաստաթուղթն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 3-րդ օրը, ժամը 11:00

ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և <կամ> առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա:

Եթե ծանուցագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 3- րդ օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վարչական վարույթի լսումներին ներկայանալ հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ժամը 11:00 կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և <կամ> առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձման և պարտավորությունների

կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ.Մաթևոսյան

հեռ. 010-30-91-91 /91-65/